

ՅԵՒԵԼՈՒՆԾ

ԱՐԵՒԵԼԵԱՆԻՒՄԻ

1861 ՅՈՒՆՈՒԱՐ 1.

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա նոր Տարի մըն ալ եկաւ, և ճիշդ գա-  
ցած տարուան պէս. առ այժմ երեւոյթը ամենեղ  
է, և յուսատու. ամենուն միօրինակ սիրելի, և  
ոչ մէկու մը ատելի:

Աւ քանի որ անպարելով և քմծիծաղ Ղե-  
ցուհիի մը նման կիջնայ Արկինքէն բոլոր մարդ-  
կային սեւը ուրախութեան շարժմունքներով  
զայն դիմաւորելու կելի:

Այժմ հասաւ նոր Տարի մըն ևս՝ որ դեռ մատ-  
ղաշ, սիրուն եւ քնքուշ Այս մըն է այն. և  
դեռ անոր ամօթխածութիւնն ու քաղցրաբա-  
րութիւնը իւր դէմքին վրայ գեղեցկապէս կը  
փայլէ. բայց ճակտին գիրը անյայտ. և միայնա-  
նոր յայտնի է՝ որ Տարիներու շրջանին սկզբնա-  
ւորութիւնը ստեղծեց. Թեպէտ և մարդս ալ  
պիտի գիտնայ զայն, բայց ե՞րբ. երբոր այն Այս-  
սը թառամի ու մեռնի . . .

Տարեգլխոյն առջեւ օրը որ է ԿԱԿԱՆՆԻ,  
ամեն աստիճանի կացութեան և հասակի մար-  
դիկ — Շնորհաւոր նոր Տարի — ըսելով ի-  
րարու ՆՈՐ ՏԱՐԻ կը բարեմաղթեն, պատ-  
կաւելի ակեղարդ ճերուհիներն. անգամ իրենց  
գերեզմանին մօտեցած՝ ինչպէս որ զուարթու-  
թեամբ մը կը բարեկեն նոր Տարին, նոյնպէս  
այս բարեմաղթութենէ ալ իրենց բաժինը ա-  
ռած՝ իրենց ալ ջերմ սրտով նոր Տարին իրենց  
թոռներուն կը բարեմաղթեն:

Այսու աղաչում, ահա մենք ալ մեր սիրելի  
Ազգակիցներուն լի ինքուրթեամբ Նոր Տարի

մը կը բարեմաղթեմք, ինչպէս որ պարտակա-  
նութիւննիս է:

Տարիներ կուգան կերթան իրենց շրջանը ա-  
րագ արագ կատարելով, բայց յայտն վայրի Հա-  
յոց Ազգը ինչ կընէ, ասիկայ հարցում մըն է  
միայն, որոյ վրայ կարճաւօր գիտողութիւն մը  
ընել կարժէ:

Արբ մեր նկատողութիւնը ընդհանուր Ազ-  
գաց վրայ դարձունեմք, պիտի տեսնեմք որ ամեն  
պիտի միայն իւր բարեշահութեան համար կաշխատի. ա-  
նանկ որ՝ երբ այս իրողութիւնը կը տեսնեմք  
չեմք կրնար առանց զգացման ուսերնիս թօթ-  
ուել և անցնիլ, եւ միայն Նոր Տարիի մը հա-  
մար սպասել, քանի որ ամեն լուսաւորեալ Ազգ  
ժամանակին էական յարգը ճանչնալով ամեն մէկ  
տարիէ մէկ մէկ օրհնութիւն չառած այն չեն  
թողուր, մեր Ազգը (ճամարիտ ազգասիրի մը  
պէս խօսելով) միայն իր բոժոժներովը կազանդ  
մըն ալ բարեկերու կսորստէ:

Յիրաւի չեմք կրնար ուրանալ որ սակաւա-  
թիւ խումբ մը կայ մեր Ազգին մէջ, որ ճշմա-  
րիտ Հայութեան վայելուչ Չանասիրութեամբ  
մը իրենց ամեն ճիգը կը թափեն Ազգը ժամ մը  
առնալ բարեկարգելու, լուսաւորելու, և զայն  
կարելի ըլլայ շուտով իւր նպատակին հասցնե-  
լու, (որ է Հայիեան սերունդը աշխարհի վրայ  
հին և երկելի Սերունդ մը, և մարդկանց ցե-  
ղին պատուական մասը ըլլալը բոլոր ազգաց  
արդեամբ ճանչցընել, որոնք դժբաղդարար դեռ:

չեն ճանչցեր, և կամ չեն ուզեր ճանչնալ) : Բայց և այնպէս չեմք կրնար ուրանալ նաևս որ այս խումբը այնքան փոքրիկ է՝ Ազգին ընդհանրութեանը նայելով, և միանդամայն իրենց կարողութիւնը այնքան նուազ է իրենց վրայ առած պարտականութեանը նկատմամբ՝ որ զըրեթէ բնաւ չեմք կրնար այս փոքրիկ խումբովը դո՛հ լինել, և յուսացուած մեծ յաջողութիւններ ձեռք բերել . . . .

Բարեմիտ ընթերցող՝ մեր այս քաճենքովը մի վճատիր, զի այն որ « մարդկանց անհնար է՝ հնարաւոր է Աստուծոյ » : Մեր խօսքերը ըզքեզ անյուսութեան մէջ թողելու համար չէ . քան լիցի, այլ զքեզ ալ այն խումբին մէջ մտցնելու դիտմամբ է, ամեն ճշմարիտ Հայր անոր անդամակից և հազորդ ըլլալու յորդորանք մին է : Աւստի ո՛ր ճշմարիտ Ազգայինք, ՚ի շնորհս նոր Տարւոյ՝ վայրիկ մի բացէք ականջնիդ ու լսեցէք անգամ մը՝ որ Ազգերնիս դեռ շատ թըշուստ է ՚ի մասին Ազգային յառաջադիմութեան և անչափապէս թշուառ . ձերին զգայուն բընութեամբը խորհեցէք մէյմը որ այսօր Ազգը մեծ և գորաւոր խումբի մը կարօտ է որով շտապաւ հասնի իւր նպատակին :

Աւստի ո՛ր մեծապատիւ Հարուստներ, ո՛ր յարգելի Աւսումնականներ, ո՛ր Մեծարու Պատուաւորներ, և ս առաւել ո՛ր վերտպատուելի Ազգերեցականներ, յիշեցէք այսօր որ դուք ալ օր մը ալ նոր Տարի պիտի չիտեսնէք, ինչպէս որ ձեր Ազգայինքին շատերը չի տեսան այս 1861 նոր Տարին . դուք ալ հոս յաւիտեան պիտի չապրիք, ինչպէս անոնք չապրեցան . դուք ալ օր մը առանց Ազգերնուդ մէջ ձեր անունները անմահացընելու յիշատակութեան արժանի արձաններ կանգնելու պիտի մեռնիք՝ ինչպէս որ շատերը այս կերպով մեռան և անոնց անունը անյիշատակութեան մէջ թաղուեցաւ . . . . Աւրեմն քանի որ ժամանակը ձեռու ընկի է՝ ձեր ամեն կարողութիւնը ձեր սիրելի և ձեզ ծնող Ազգին բարեբաւութեանը համար գործածելէ՛ չի դանդաղիք, որոյ կը պարտիք ձեր քաղցր կեանքը, ձեր հզոր հարստութիւնը, ձեր օգտաւէտ ուսումնականութիւնը, ձեր արդիւնաւոր պատուաւորութիւնը, և ձեր պողպեթը հոգևոր բարի սերմունքը նուիրելու ՚ի փառս Ազգին :

Սակայն ցաւ է մեզ յիշել՝ որ դեռ հարբատութեան և ուսումնականութեան մէջ տեղի անջրպետը չի վերցաւ, դեռ չեկաւ այն օրը որ

երբ հարուստը իր ձեռքը պիտի երկնցընէ ուսումնականին, եւ այնպէս պիտի գործեն միաբան ՚ի սեր Հայրենեաց :

Ցաւ է մեզ ըսել որ ամեն ճիգ ոչինչ է՝ եթէ հարուստը չի սորվի յարգել ուսումնականը եւ օգնել անոր : Արհնապատիկ ցաւ է մեզ զըրողցել թէ՛ մեր Ազգը գլխաւոր բան մը չունի վրան ուրախանալու՝ քանի որ չունի իւր մէջը բազմաթիւ հարուստ ուսումնականներ կամ ուսումնասէր հարուստներ, խոնարհամիտ ուսումնադէտներ եւ Ազգասէր անհատներ : Եւ այն եւ այն : Յիրաւի կան հարուստ, ուսումնական, ազքատասէր եւ ազգասէր Անձինք՝ բայց անզոյգ, կան բայց միայնակ, կը գտնուին՝ բայց առանձին, այս չափով ի՛նչքան շո՛հ Ազգին, ո՛րքան օգուտ կրնայ յառաջ դալ ընդհանուրին, այլ եւ ոչինչ . . . .

Եւ սակայն եկու ո՛ր ազգասէր ընթերցող մէկ կողմանէ զմեզ մխիթարելու եւ մեզ քաջալերելու համար՝ սա քիչ առենի մէջ առաջ եկած քանի մը անգամապատ իրողութիւնները ձեռք առած՝ այս մասին անյոյս չի մնամք, այլ առաւել զօրանամք, որ ինչպէս 1859 տարւոյն վերջերը Ազգը դեռ ծանր ծանր վշտերու ենթակայ՝ եւ անով յուսակորոյս մը եղած էր, ահա հասաւ 1860 տարին, որ ՚ի քաջալերութիւն եւ ՚ի մխիթարութիւն Ազգիս ծնաւ Սահմանադրութիւն մը, որն որ բարոյապէս ըստ բաւականի կենդանացուց Ազգը եւ զօրացուց, բայց նիւթապէս անզօր մնաց այն եւ տկար, ուստի յուսայն է որ այս 1861 Վոր տարին ալ իւր շջմանին մէջ յարուցանէ մեզի այնպիսի անձինքներ՝ որոնցմով վերոյիշեալ առաքինազարդ անձանց թիւը շատնալով՝ մեր ըրած ցաւալի դիտողութիւնները տեղիք մը չունենան . եւ այնպէս Ազգը այս անգորութեան ու տկարութեան խնայմամբ՝ իւր փառաբելի նպատակին կոյսնը հասնի :

Եւ արդ՝ Վոր Տարւոյս առթիւը այսքան խօսք ընելը մեզի սրբապան պարտք մը համարելով եւ կրկին անգամ այս Վոր Տարին սիրելի Ազգիս բարեմայթելով կը լռեմք :

Խմբագիր-Տնօրէն  
Մ. Գ. ՏԵՅԻՐՄԵՆՅԱՆ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐԳՅԱՆ  
ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՅԵՆՆԻՃԱՐԱՐ